


ՄՏԵԻ ՎԵՐԱՆՈՐՈՂՈՒԹԻՒՆ

Պօղոս Առաքեալ կը խօսի փակուած միտքերու մասին (Բ. Կր. 3.14-15), ապականած միտքերու մասին (Ս. Տիմ. 6.5), բացարձակ միտքերու մասին (Բ. Ժա. 1.9), աշխարհիք գիտութիւններով գրաւուող միտքերու մասին (Կղ. 2.8), մարմնականին կառչած միտքերու մասին (Հո. 8.7), իսաւարած միտքերու մասին (Եփ. 4.18): Մեզ միտք մը «Աստուծոյ թշնամի է, որովհետեւ Աստուծոյ օրէնքներուն չի հնազանդիր, ո՛չ ալ կրնայ հնազանդիլ» (Հո. 8.7): Բայց որպէսզի բարեկամ ըլլայ Աստուծոյ ու կարենայ հնազանդիլ անոր խօսքին ու կամփին, պէտք է ազօթէ, որ Աստուած նորոգէ ու նոր մարդ դարձնէ զինք (Հո. 12.2), լուսաւորէ զինք (Եփ. 1.18), եւ իր մէջ դրոշմէ իր օրէնքները (Եբր. 8.10, 10.16): Երբ Աստուած իր Սուրբ Հոգիին ու սուրբ խօսքին միջոցաւ բանայ ու նորոգէ մեր միտքերը, այն ատեն միայն զինք պիտի ֆանչնանք մշտարտապէս (Ս. Յե. 5.20), եւ այն ատեն միայն անգրաղ միտքով Տիրոջ հնազանդութեան պիտի նուիրուինք (Ս. Կր. 7.35): Արդարեւ, նորոգուած միտքը պատրաստ եւ արթուն եղող միտքն է, որ իր ամբողջ յոյսը կապած կ'ըլլայ փրկութեան (Ս. Պա. 1.13): Նորոգուած միտքը Աստուծոյ կամքը գիտցող ու կատարող միտքն է, Փրկչին սիրոյն մասին խոկալով հրեռուացող միտքն է, իր հայեացքը մնայուն կերպով երկինք սեւեռող միտքն է, մշտարտութիւնը սիրող ու ստուքներէն գարշող միտքն է: Նորոգուած միտքը Աստուծոյ համար ընդունելի ու կատարեալը ֆանչցող եւ լաւն ու բարին հետապնդող միտքն է (Հո. 12.2):



ԵԿԵՂԵՑԻՆ

Եկեղեցին Առաքելական է:

Այսինքն հաստատուած է առաքելներու քարոզախօսութեամբ, եւ առաքելները դարձած են հիմնադիրը այդ եկեղեցոյ: Ինչպէս հռովմի եկեղեցոյ հիմնադիրները կը ճանչցուին Պետրոս եւ Պօղոս առաքելները, նմանապէս Հայց. Եկեղեցոյ հիմնադիրներն են Թադէոս եւ Բարթողիմէոս առաքելները:

Այստեղ յիշենք Յիսուսի վերջին պատգամը ուղղուած առաքելներուն, որ կ'ըսէ. «Գացէք եւ բոլոր ժողովուրդները ինձի աշակերտ դարձուցէք: Չանոնք մկրտեցէք՝ Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով Անոնց ստրվեցուցէք այն բոլոր պատուիրանները, որ ես ձեզի տուի. եճահա միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ աշխարհիս վախճանը» (Մտթ. Գլ.Իր. 19-20)

Եկեղեցին Սուրբ է...

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՈՒԱԶՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jcrak ճրագ քերթ



ԸՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՈՏԵՐՈՒՄ ԵՆԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԴ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 27 ՅՈՒՆԻՍ 2021

ԹԻԻ 26

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱԾՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Ես. 2.5-11: Հո. 9.30-10.4:

ՅԻՍՈՒՍ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 13.24-30

ՏՕՆ ՍՐԲՈՒՀԻՈՅ ԱՍՏՈՒԾԱԾՆԻ ՏՓՈՅ ԳՏՄԱՆՆ

ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 13.24-30

Յիսուս ուրիշ առակ մըն ալ խօսեցաւ անոնց եւ ըսաւ. «Մարդ մը լաւ սերմեր ցանեց իր արտին մէջ: Գիշեր մը, երբ ամէն մարդ քնացած էր, անոր թշնամին եկաւ որո՞մ ցանեց ցորենին մէջ եւ զնաց: Երբ սերմերը աճեցան եւ սկսան հասկ կազմել, այն ատեն որո՞մն ալ երեւցաւ:

Տանտիրոջ ծառաները եկան եւ ըսին անոր. «Տէ՛ր, դուն միայն լաւ սերմեր չցանեցի՞ր արտիդ մէջ. ուրկէ՞ հապա որո՞մը»:

Ան պատասխանեց. «Ասիկա թշնամիի գործ է»:

Ծառաները ըսին. «Կ'ուզե՞ս որ երթանք եւ որո՞մը քաղենք»:

«Ո՛չ,- պատասխանեց տէրը,- որովհետեւ որո՞մը քաղած ատեն կրնայ ըլլալ, որ երկուքն ալ միասին արմատախիլ ընէք: Չզեցէք, որ երկուքն ալ միասին աճին մինչեւ հունձի ժամանակ: Ես հնձուորներուն կ'ըսեմ, որ նախ որո՞մը քաղեն, խորձեր կազմեն այրելու համար, եւ ապա քաղեն ցորենը եւ ամբարեւն շտեմարաններու մէջ»:

Ահաւասիկ ճիշդ ասոր կը նմանի երկինքի արքայութիւնը:

ՕԳՏԱԳՈՐԾԷ ՍԻՐՏԴ

Եթէ «Աստուծոյ խօսքը կենդանի է» (Եբր. 4.12) հապա ինչո՞ւ չի կրնար կենդանացնել իրենց հաւատքին մէջ մեռած մարդիկը: Եթէ Աստուծոյ խօսքը կրնայ մեր հոգիները փրկել (Յկ. 1.21) հապա ինչո՞ւ կորսուած մարդիկ չեն փրկուիր երբ կը լսեն զայն: Չշարունակենք «եթէ»-ներու շարքը: Կանգ առնենք եւ մտածենք պատասխանին մասին: Աստուծոյ խօսքը լսողներուն մէջ ոմանք կ'օգտագործեն իրենց ականջները եւ ոմանք ալ իրենց սիրտերը: Սիրելի ընթերցող, ի՞նչ կ'օգտագործես, երբ Աստուծոյ խօսքը կը քարոզուի. աչք ու ականջ, թէ՛ սիրտ ու հոգի: Եթէ Աստուծոյ խօսքը հասնի ականջիդ, դուն չես փոխուիր, իսկ եթէ հասնի սիրտիդ՝ կը փոխուիս:

**ԳԻՏ ՏՓՈՅ
Ս.ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆԻ**

Ս. Աստուածածինին նուիրուած տօներու շարքին, յետագային աւելցան նաեւ իր գործածած իրերու նուիրուած տօներ, որոնցմէ մէկն է Ս. Աստուածածինի Տուփի գիւտի տօնը:

Ս. Աստուածածինի Տուփի գիւտը տեղի ունեցած է հետեւեալ ձևով: Երկու իշխաններ ուխտի կը գտնուին Երուսաղեմ: Երբ անոնք կը հասնին Գալիլիա, այնտեղ կը տեսնեն հրեայ կնոջ մը տան առջեւ հաւաքուած բազմութիւն մը՝ բաղկացած ամէն տեսակի հիւանդներէ: Հետաքրքրուելով ներս կը մտնեն եւ կը տեսնեն տուփ մը: Հրեայ կնոջմէ կ'իմանան, որ տուփը ժամանակին կը պատկանէր Ս. Կոյսին: Իշխանները կ'երթան Երուսաղեմ, շինելու տան նոյն տուփէն օրինակ մը եւ վերադառնալով կնոջ բով, իրենց տուփը կը փոխանցեն անոր եւ Ս. Կոյսին իսկական տուփը կը տանին Պոլիս եւ կը պատմեն պատահածը Պատրիարքին: Պատրիարքը մեծ հանդիսութեամբ տուփը կը գետեղէ եկեղեցւոյ մէջ եւ յատուկ օր կը նշանակէ տօնելու համար Գիւտ Տփոյ Ս. Աստուածածինի տօնը:

Այս տօնը մեր եկեղեցւոյ տօնացոյցին մէջ անցուցած է Սիմէոն կաթողիկոս 1774-ին իր հրատարակած տօնացոյցին մէջ եւ կը տօնակատարուի Յունիս, Յուլիս ամիսներու միջեւ:

**Ինչո՞ւ Աստուծոյ
ողորմութիւնն ու գթութիւնը
խնդրելու համար
հաւատացեալներուն
կը թելադրուի ծոմապահութեամբ
աղօթել:**

Որովհետեւ ծոմապահութիւնը խոնարհութեան, հեզութեան, անձնուիրութեան եւ ես-ի ունայնացման արարք մըն է, գոր ենթական պէտք է գործով ցոյց տայ իր Արարիչին՝ հրաժարելով աշխարհի բոլոր ցանկութիւններէն եւ անոնց առթած հանոյճներէն ու վայելիքներէն՝ արժանանալու համար Աստուծոյ սիրոյն: Ծոմ պահողը իր սրտին ամբողջական սէրը արտայայտած կ'ըլլայ Աստուծոյ հանդէպ՝ հրաժարելով իր մարմնոյն կենսական եղող հացէն ու ջուրէն: Ան իր հաւատքն ու համոզումը յայտնած կ'ըլլայ Աստուծոյ խօսքին՝ թէ «Ոչ միայն հացով կ'ապրի մարդ, հապա այն ամէն խօսքով՝ որ Աստուծոյ բերնէն կ'ելլէ»:

Ծոմապահութեան կամ պահքի հետ համընթաց կատարուելու են աղօթք եւ ողորմութիւն: Յոյժ թելադրելու է, որ հաւատացեալներ ծոմապահութեան կամ պահքին պատեառով ծախսերէն կրնատուած գումարները յատկացնեն աղքատներու կամ բարի նպատակներու:

**ԹՎԱԿՐԳ ԼԱՐՈՂՆԵՐԸ
ԲՈՆՈՒԵՅՈՒ ԹՎԱԿՐԳԻՆ ՄԷՋ**

Մեծէն պզտիկ բոլորն ալ մէկ առ մէկ հեռացան: Քանի մը հաստատումներ եւս: Առաջին, Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները Յիսուսին եւ Յիսուսի շուրջ հաւաքուած ժողովուրդին կ'ուզէին ցոյց տալ, թէ իրենք անմեղ էին եւ հակառակ մեղքին, բայց Յիսուսի խօսքը՝ «Զեր մէջէն անմեղը թող ինք առաջին քարը նետէ անոր վրայ, հրապարակեց անոնց մեղքերն ու մեղաւորութիւնը ամենուն դիմաց եւ խայտառակ ըրաւ զանոնք: Երկրորդ, եթէ կինը օրէնքը կոտորած էր շնութիւն ըրած ըլլալուն համար, ապա Օրէնքի ուսուցիչներն ու Փարիսեցիները իրենք եւս Օրէնքը կոտորեցին՝ քանի չկրցան զայն քարկոծել: Իբրեւ Օրէնքի պաշտպաններ եկան՝ իբրեւ Օրէնքը կտրողներ փախան: Երրորդ, եկան Տէրը ծուղակի մէջ ձգելու՝ իրենք ինկան իրենց լարած ծուղակին մէջ:

**ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ
ԴԱՍԸ**

Դատապարտելու եկած անձերը՝ դատապարտուած մեկնեցան: Ուստի, զգուշանանք ուրիշները դատապարտելէ, որպէսզի չդատապարտուինք: ՏԵՐ ԶՕՐԱՅՈՒՐ ՄԵՉ ՄԵՐ ՀԱՄԱՏՔԻՆ ՄԷՉ

**ԵԹԷ ՄԵՂՔԵՐԷՂ ՍՐԲՈՒԵԼՈՒ
ՅԱՆԿՈՒԹԻՒՆ ՈՐԵՆԻՍ ԿԱՐՎ՝ ՍԱՂԱՌՈՍ 25**

Տիրոջն է երկիրը՝ իր ամբողջ լիութեամբ, աշխարհը՝ իր բնակիչներով: Որովհետեւ ինք անոր հիմերը դրաւ ծովերուն վրայ, ովկիանոսներուն վրայ հաստատեց զայն: Ո՞վ արժանի է Տիրոջ լեռը ելլելու, ո՞վ կրնայ անոր սուրբ տաճարին մէջ կանգնիլ: Ան՝ որ մաքուր է իր գործերով ու մտածումներով, ան՝ որ ստութեան անձնատուր չէրաւ, եւ նենգութեամբ երդում չըրաւ: Այնպիսին Տիրոջմէ օրհնութիւն պիտի ստանայ, արդարութիւն պիտի գտնէ զինք փրկող Աստուծմէն: Այսպէ՛ս կ'ըլլայ աստուածապաշտը, որ կ'ուզէ քու ներկայութեանդ գայ, ո՞վ դուն՝ Աստուածը մեր հայրերուն: Բացէ՛ք ձեր փեղկերը, ո՞վ դարպասներ, թող բացուի՛ն յաւիտենութեան դռները, որպէսզի ներս մտնէ փառաւոր Թագաւորը: -Ո՞վ է այս փառաւոր Թագաւորը: - Տէ՛րն է, հզօր եւ անպարտելի, Տէ՛րը, պատերազմի մէջ անխորտակելի: Բացէ՛ք ձեր փեղկերը, ո՞վ դարպասներ, թող բացուի՛ն յաւիտենութեան դռները, որպէսզի ներս մտնէ փառաւոր Թագաւորը: - Ո՞վ է այս փառաւոր Թագաւորը: - Ամենակալ Տէ՛րը, ի՛նքն է փառաւոր Թագաւորը:

Միասնաբար աղօթենք կարդալով Սաղմոսագիրքը: